

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Ձև 5)

Ծանոթագրություն 1. "Իրավական դաշտ"

"ՓՄՁ ներդրումներ" ունիվերսալ վարկային կազմակերպությունը հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն:

✓ 2009թ-ի օգոստոսի 7-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 235Ա որոշմամբ գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում որպես "ՓՄՁ ներդրումներ" ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն (գրանցման վկայական թիվ 90):

"ՓՄՁ ներդրումներ" ունիվերսալ վարկային կազմակերպության գրասենյակը գտնվում է ք.Երևան, Ա. Արմենակյան 2/5 հասցեում:

2011թ հաշվետու տարում "ՓՄՁ ներդրումներ" ՈւՎԿ ՓԲԸ-ի աշխատողների միջին թվաքանակը կազմել է 14 մարդ:

Կազմակերպության հիմնական գործունեությունն է փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորման նպատակով առևտրային վարկերի տրամադրումը, այլ անձանց կապիտալի ֆինանսավորումը:

Ընդհանուր բնութագիր

Ծանոթագրություն 2. "Հաշվապահական ստանդարտներ"

"ՓՄՁ ներդրումներ" ունիվերսալ վարկային կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նորմատիվային ակտերի համաձայն, համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) ու Կազմակերպության կողմից մշակված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների համակարգված ներկայացումն են:

Հաշվետվությունները կազմվել են պահպանելով անընդհատության, հետևողականության, հաշվեգրման, հասկանալիության, էականության, միասնականության, արժանահավատության, համադրելիության, հաշվանցման և սահմանազատման սկզբունքները:

Հաշվապահական հաշվառման գրանցումները Կազմակերպությունը վարում է Հայաստանի Հանրապետության արժույթով՝ ՀՀ դրամով:

Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Կազմակերպության հաշվառման գրանցումների վրա, տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է ղեկավարությունից կատարել այնպիսի գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում ներկայացված գումարների վրա հաշվետու ժամանակաշրջանում: Սույն ֆինանսական հաշվետվությունների գծով առավել նշանակալի գնահատումները վերաբերում են հնարավոր կորուստների պահուստին:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Կազմակերպություն և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Կազմակերպությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել:

Տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով:

Ոչ տոկոսային ծախսերը ճանաչվում են գործարքների կատարման պահին: Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներն ու ծախսերը, ինչպես նաև այլ հիմնական եկամտային և ծախսային հոդվածները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում են այն ժամանակ, երբ դրանց գծով գործառնությունները փաստացի կատարվում են:

Արտարժույթով գործառնություններ

"ՓՄՁ ներդրումներ" ՈւՎԿ փակ բաժնետիրական ընկերությունը արտարժույթով գործառնություններ չի իրականացնում:

Հարկեր

Կազմակերպության շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ հարկից:

Ընթացիկ շահութահարկի գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն և իրենից ներկայացնում է տարվա հարկվող շահույթի (հարկային վնասի) գծով վճարման ենթակա հարկի գումարը, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում վճարում է նաև այլ հարկեր, տուրքեր, որոնք ներառված են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության առումով դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են Կազմակերպության բանկային հաշիվների մնացորդներից: Կազմակերպությունն իր բոլոր գործարքները կատարում է անկանխիկ եղանակով:

Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր գործունեության ընթացքում Կազմակերպությունն օգտագործում է առևտրային բանկերում բացված բանկային և ավանդային հաշիվներ: Ավանդները և բանկային հաշիվները հաշվեկշռում հաշվառվում են սկզբնական արժեքով հանած, օրենսդրությամբ սահմանված, դրանց գծով հնարավոր կորուստների ծածկման պահուստները:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու կազմակերպության կարողությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրության պահանջներով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում՝ հայտարարվելու ժամանակաշրջանում:

Ֆինանսական գործիքներ

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվը և պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Կազմակերպության ֆինանսական ակտիվներն են հաճախորդներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը:

✓ Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով առանց պարտքը վաճառելու մտադրության:

Կազմակերպության կողմից տրամադրված վարկերի դիմաց ստացվելիք և փոխառությունների դիմաց վճարվելիք տոկոսները հաշվարկվում են տարին ընդունելով 365 օր:

Վարկերը որակվում են որպես չաշխատող, երբ դրանց գծով մայր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում: Չաշխատող վարկերը կարող են վերադասակարգվել որպես աշխատող, երբ ձեռք է բերվում հիմնավորված համոզվածություն ողջամիտ ժամանակահատվածի ընթացքում պայմանագրով նախատեսված չմարված մայր գումարի և տոկոսների հավաքագրման վերաբերյալ:

Վարկերը և այլ փոխառությունները հաշվեկշռում հաշվառվում են սկզբնական արժեքով հանած, օրենսդրությամբ սահմանված, դրանց գծով հնարավոր կորուստների ծածկման պահուստները:

Վարձակալություն

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն:

Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

Արժեզրկում

Ֆինանսական ակտիվը արժեզրկված է, եթե նրա հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք առկա են օբյեկտիվ փաստեր, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը կարող է լինել արժեզրկված:

Ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ

Կազմակերպությունն ակտիվների հնարավոր կորուստները ծածկելու նպատակով վարում է առանձին անալիտիկ հաշիվներ՝ ընդհանուր և հատուկ պահուստների համար: Այդ պահուստների մեծությունը ճշգրտվում է ակտիվների յուրաքանչյուր դասակարգման ամսաթվին (ամսվա վերջին աշխատանքային օրը):

Ընդհանուր պահուստը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով:

Հատուկ պահուստը ձևավորվում է ռիսկային ակտիվների մանրամասն գնահատման արդյունքում: Ի լրումն, ընդհանուր պահուստի գումարները ձևավորվում են այն ռիսկերի նվազեցման նպատակով, որոնք թեև հատուկ ձևով բացահայտված չեն, սակայն գոյություն ունեն վարկային կազմակերպությունների ակտիվների ցանկացած պորտֆելում: Վարկերի կորուստների գծով պահուստի գումարի ընդհանուր փոփոխությունը գրանցվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ղեկավարության կողմից պահուստի գումարի գնահատումը կատարվում է ելնելով անցյալում կորուստներ ունենալու Կազմակերպության փորձից, ՀՀ ԿԲ պահանջներից, պորտֆելին ներհատուկ և նրանում գոյություն ունեցող ռիսկերից, բացասական բնույթի իրավիճակներից, որոնք կարող են ազդեցություն թողնել վարկը մարելու վարկառուի հնարավորությունների վրա, ինչպես նաև ապավիճություն հանդիսացող գրավի գնահատված արժեքից և ընթացիկ տնտեսական պայմաններից:

Վարկերի հնարավոր կորուստների գումարի գնահատումը նախատեսում է որոշակի դատողություններ: Այն դեպքում, երբ հնարավոր է դառնում, որ Կազմակերպությունը կոնկրետ ժամանակաշրջանում կարող է ունենալ որոշակի կորուստներ, որոնք հիմք են հանդիսանում պահուստի ձևավորման համար, վարկային պորտֆելին բնորոշ վնասներն հատուցելու համար բավականաչափ պահուստի գումարի որոշումը իրականացվում է ղեկավարության կողմից կատարվող համապատասխան դատողությունների հիման վրա:

Երբ վարկի գումարը դառնում է անհավաքագրելի, այն դուրս է գրվում համապատասխան պահուստի հաշվին: Եթե պահուստին հատկացումներ կատարելուց հետո տեղի ունեցող դեպքերի արդյունքում պարզ է դառնում, որ հնարավոր կորուստի գումարը փոքրանում է, ապա համապատասխան պահուստի հակադարձման գումարը գրանցվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Կազմակերպությունը ակտիվների դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստների ձևավորումը իրականացնում է ՀՀ օրենսդրության պահանջների և "ՓՄՁ ներդրումներ" ունիվերսալ վարկային կազմակերպության բաժնետերերի ժողովի որոշմամբ հաստատված "Վարկերի և դեբիտորական պարտքերի (ակտիվների) դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման" կարգի համաձայն:

Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ

Եթե իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի գծով վնասը ճանաչվել է ուղղակիորեն սեփական կապիտալում և առկա է օբյեկտիվ վկայություն, որ ակտիվն արժեզրկված է, ապա կուտակված զուտ վնասը, որը ճանաչվել էր ուղղակիորեն սեփական կապիտալում, հանվում է սեփական կապիտալից և ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, նույնիսկ, երբ ֆինանսական ակտիվը չի ապաճանաչվել:

Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան կատարվում է համաձայն "Շահութահարկի մասին" ՀՀ օրենքով սահմանված նվազագույն ժամկետների:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք
Համակարգիչներ	1	100%
Փոխադրամիջոցներ	5	20%
Այլ հիմնական միջոցներ	5	20%
Գույք և գրասենյակային սարքավորումներ	5	20%

Մինչև 50,0 հազ. դրամ արժողությամբ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը սահմանված է մեկ տարի:

Ոչ նյութական ակտիվներ, այդ թվում՝

Համակարգչային ծրագրեր	10	10%
Ինտերնետ կայք (տնային էջ)	5	20%

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկսնական ճանաչման ժամանակ չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ցանակացած կուտակված արժեզրկման ծախս: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի և անորոշ: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցողները ամորտիզացվում են գծային մեթոդով 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման համար, երբ առկա են արժեզրկման հատկանիշները:

Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվների ամորտիզացիայի ժամանակահատվածներն ու մեթոդները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, բայց տարին մեկ անգամ ստուգվում են արժեզրկման համար անհատական կամ դրամային միջոցներ ստեղծող միավորի մակարդակով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ պարզելու համար, թե արդյոք ակտիվի օգտակար ծառայության ժամկետը դեռևս անորոշ է գնահատվում:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Կազմակերպություն: Այս ծախսումների

մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներառվում է գործառնական եկամուտներում:

Հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին

Կազմակերպությունում աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը կենտրոնական գանձապետարան փոխանցելուց բացի այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում: Նշված հատկացումների հետ կապված ծախսերը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

Վերադասակարգում

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարում ներկայացման փոփոխությունների հետ համադրելիությունն ապահովելու նպատակով:

Համադրելի տեղեկատվություն

Ծանոթագրություն 3. "Տոկոսային և նմանատիպ եկամուտներ"

	2011թ	2010թ
ա) տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ավանդներից	170,780	145,480
բ) տոկոսային եկամուտներ դրամական շուկայում ներդրումներից	-	-
գ) տոկոսային եկամուտներ վարկերից և այլ փոխառություններից	182,949	97,508
դ) տոկոսային եկամուտներ ներդրումներից	-	-
ե) այլ տոկոսային եկամուտներ	-	-
Ընդամենը	353,729	242,988

Ծանոթագրություն 4. "Տոկոսային և նմանատիպ ծախսեր"

	2011թ	2010թ
ա) տոկոսային ծախսեր դրամական շուկայի փոխառությունների դիմաց	-	-

բ) տոկոսային ծախսեր հաճախորդներից ստացված փոխառությունների դիմաց	-	-
գ) այլ տոկոսային ծախսեր	114,606	58,204
Ընդամենը	114,606	58,204

Ծանոթագրություն 5. "Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից զուտ շահույթ/(վնաս)"

	2011թ	2010թ
ա) Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վաճառքից զուտ շահույթ/(վնաս)	-	-
բ) Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից զուտ շահույթ/(վնաս)	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 6. "Վաճառքի համար նախատեսված ներդրումներից զուտ շահույթ/(վնաս)"

	2011թ	2010թ
վաճառքի համար նախատեսված ներդրումների վաճառքից զուտ շահույթ/(վնաս)	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 7. "Արտարժույթային գործառնություններից ստացված զուտ շահույթ/(վնաս)"

	2011թ	2010թ
ա) արտարժույթի վաճառքից ստացված զուտ շահույթ/(վնաս)	-	-
բ) արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ շահույթ/(վնաս)	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 8. "Այլ գործառնական եկամուտ"

	2011թ	2010թ
ա) եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	28	19
բ) ֆակտորինգից ստացված եկամուտներ	-	-
գ) արտասովոր եկամուտներ	-	-
դ) եկամուտ շնորհներից	860	3,884
ե) այլ եկամուտներ	5,356	1,757
Ընդամենը	6,244	5,660

Ծանոթագրություն 9. "Վարկերից և այլ փոխառություններից առաջացած կորուստներ" Տեղաբաշխված ավանդների գծով

	2011թ	2010թ
ա) սկզբնական մնացորդ	13,206	11,783

բ) պահուստին մասհանումներ	15,690	26,421
գ) պահուստի օգտագործում	15,726	24,998
դ) վերջնական մնացորդ	13,170	13,206

Տեղաբաշխված վարկերի գծով	2011թ	2010թ
ա) սկզբնական մնացորդ	8,278	7,377
բ) պահուստին մասհանումներ	24,449	4,170
գ) պահուստի օգտագործում	2,715	3,269
դ) վերջնական մնացորդ	30,012	8,278

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով	2011թ	2010թ
ա) սկզբնական մնացորդ		
բ) պահուստին մասհանումներ		
գ) պահուստի օգտագործում		
դ) վերջնական մնացորդ		-

Բանկային հաշիվների, դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով	2011թ	2010թ
ա) սկզբնական մնացորդ	341	17
բ) պահուստին մասհանումներ	2,036	1,845
գ) պահուստի օգտագործում	2,215	1,521
դ) վերջնական մնացորդ	162	341

Ընդամենը ակտիվների գծով	2011թ	2010թ
ա) սկզբնական մնացորդ,	21,825	19,177
բ) պահուստին մասհանումներ,	42,175	32,436
գ) պահուստի օգտագործում,	20,656	29,788
դ) վերջնական մնացորդ,	43,344	21,825

Հետհաշվեկշռային հոդվածների գծով	2011թ	2010թ
ա) սկզբնական մնացորդ	-	-
բ) պահուստին մասհանումներ	-	-
գ) պահուստի օգտագործում	-	-
դ) վերջնական մնացորդ	-	-

Ընդամենը մասհանումներ	42,175	32,436
-----------------------	--------	--------

Վարկերից և փոխարկություններից առաջացած կորուստների գումարը 2010թ-ին կազմել է 2.649 հազ. դրամ, 2011թ-ին՝ 21.519 հազ. դրամ:

Ծանոթագրություն 10. "Ընդհանուր վարչական ծախսեր"

	2011թ	2010թ
--	-------	-------

ա) ծախսեր անձնակազմի գծով	60,913	41,535
բ) կառավարչական ծախսեր	28,853	23,345
Ընդամենը	89,766	64,880

Ծանոթագրություն 11. "Այլ գործառնական ծախսեր"

	2011թ	2010թ
ա) վճարված տույժեր և տուգանքներ	-	-
բ) գովազդային և ներկայացուցչական ծախսեր	581	693
գ) ֆակտորինգի գծով ծախս	-	-
դ) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	6,237	5,062
զ) այլ ծախսեր	155	106
Ընդամենը	6,973	5,861

Ծանոթագրություն 12. "Շահութահարկի գծով ծախս"

	2011թ	2010թ
Ընթացիկ հարկ	25,432	23,491
Հետաձգված հարկ	-	-
Ընդամենը	25,432	23,491

Ընթացիկ տարում կազմակերպությունը աշխատել է շահույթով: Հարկային նպատակներով հաշվարկվել է շահույթ, որը կազմել է 25.432 հազ. դրամ: Ֆինանսական շահույթը կազմել է 127.110 հազ. դրամ: Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20%:

	2011թ	%	2010թ	%
Շահույթը/(վնասը) մինչև հարկումը	127,110	-	117,054	-
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	25,422	20%	23,411	20%
<u>Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի</u>	-	-	-	-
<u>ճշգրտումներ ոչ ժամանակավոր տարբերությունների գծով</u>	-	-	-	-
<u>Հարկային վնասի իրացում</u>	-	-	-	-
Բացասական փոխարժեքային տարբերություն	-	-	-	-
Չնվազեցվող ծախսեր	10	0.10%	80	0.10%
Այլ ոչ ժամանակավոր տարբերություններ	-	-	-	-
Շահութահարկի գծով ծախս/եկամուտ	25,432	-	23,491	-

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

	մնացորդ 31.12.2011թ դրությամբ	ֆինանսական արդյունքներով ճանաչված	մնացորդ 31.12.2010թ դրությամբ	ֆինանսական արդյունքներով ճանաչված
Հետաձգված հարկային	-	-	-	-

ակտիվներ				
Կրեդիտորական պարտքեր	-	-	-	-
Փոխանցվող հարկային վնաս	-	-	-	-
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	-	-	-	-
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	-	-	-	-

Ծանոթագրություն 13. "Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ"

	2011թ	2010թ
ա) կանխիկ դրամական միջոցներ և դրան հավասարեցված վճարային փաստաթղթեր	-	-
բ) բանկային հաշիվներ բանկերում	15,994	33,800
գ) տեղաբաշխված բանկային հաշիվների և այլ ավանդների գծով պահուստ (ծան.9)	160	338
Ընդամենը	15,834	33,462

Ծանոթագրություն 14. "Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ"

	2011թ	2010թ
ա) Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր	-	-
բ) այլ երկրների պետական արժեթղթեր	-	-
գ) Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր	-	-
դ) այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	-	-
ե) ածանցյալ գործիքներ	-	-
զ) ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	-	-
է) դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ (ծան. 9)	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 15. "Բանկերում տեղաբաշխված միջոցներ"

	2011թ	2010թ
ա) բանկերում ներդրված ավանդներ	1,317,000	1,320,601
բ) բանկերին տրված վարկեր և այլ փոխատվություններ	-	-
գ) ավանդների հնարավոր կորուստների ծածկման պահուստ (ծան. 9)	13,170	13,206
Ընդամենը	1,303,830	1,307,395

Ծանոթագրություն 16. "Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ"

2011թ 2010թ

ա) ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդներ	-	-
բ) ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և այլ փոխատվություններ	-	-
գ) տեղաբաշխված վարկերի գծով պահուստ (ծան. 9)	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 17. "Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ"

2011թ 2010թ

ա) տրամադրված վարկեր և այլ փոխատվություններ	3,001,201	827,836
բ) տեղաբաշխված վարկերի գծով պահուստ (ծան. 9)	30,012	8,278
Ընդամենը	2,971,189	819,558

Ծանոթագրություն 18. "Վաճառքի համար նախատեսված ներդրումներ"

2011թ 2010թ

ա) Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր	-	-
բ) այլ երկրների պետական արժեթղթեր	-	-
գ) Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր	-	-
դ) այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	-	-
ե) ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	-	-
զ) դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ (ծան. 9)	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 19. Այլ գործառնությունների գծով ստացվելիք ստացվելիք գումարներ

2011թ 2010թ

ա) ստացվելիք շահաբաժիններ	-	-
բ) հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	-	-
գ) երաշխիքներ	-	-
դ) հեջավորման ածանցյալ գործիքներ	-	-
ե) ստացվելիք այլ գումարներ	-	-
զ) դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ (ծան. 9)	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 20. "Վարձակալության գծով ստացվելիք գումարներ"

2011թ 2010թ

ա) վարձակալության գծով ստացվելիք գումարներ	-	-
բ) չճանաչված տոկոսային եկամուտ	-	-

Ընդամենը	-	-
----------	---	---

Ծանոթագրություն 21. "Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ"

	2011թ	2010թ
ա) Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր	-	-
բ) այլ երկրների պետական արժեթղթեր	-	-
գ) Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր	-	-
դ) այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	-	-
ե) ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	-	-
զ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման պահուստ (ծան. 9)	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 22. "Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ"

Շահագործման մեջ գտնվող ակտիվներ	2011թ				Ընդամենը
	Հող, շենք և գույք	Համակարգչային սարքավորում	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	
Հաշվեկշռային արժեք	----	----	----	----	
Նախորդ տարվա վերջին տվյալները	2,555	6,519	12,950	5,048	27,072
Ավելացում	2,322	1,268	8,320	84	11,994
Օտարում					
Ընթացիկ ժամանակաշրջանի վերջի տվյալները	4,877	7,787	21,270	5,132	39,066
Մաշվածք	----	----	----	----	
Սկզբնական մնացորդ	516	5,212	432	647	6,807
Կուտակված ամորտիզացիա	598	1,930	3,145	563	6,236
Կուտակված արժեզրկում					0
Վերջնական մնացորդ	1,114	7,142	3,577	1,210	13,043
Զուտ հաշվեկշռային արժեք	----	----	----	----	26,023
Նախորդ տարվա վերջ	2,039	1,307	12,518	4,401	20,265
Ընթացիկ տարվա վերջ	3,763	645	17,693	3,922	26,023
Շահագործումից դուրս ակտիվներ					
Հաշվեկշռային արժեք	----	----	----	----	----
Նախորդ տարվա վերջին տվյալները					
Ավելացում					
Օտարում					
Ընթացիկ ժամանակաշրջանի					

վերջին տվյալները

Մաշվածք	---	---	---	---	---
Սկզբնական մնացորդ					
Կուտակված ամորտիզացիա					
Կուտակված արժեզրկում					
Վերջնական մնացորդ					
Զուտ հաշվեկշռային արժեք	---	---	---	---	---
Նախորդ տարվա վերջ					
Ընթացիկ տարվա վերջ					

2010թ

Շահագործման մեջ գտնվող ակտիվներ	Հող, շենք և գույք	Համակարգչային սարքավորում	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք	---	---	---	---	---
Նախորդ տարվա վերջին տվյալները	1,802	4,406	-	4,698	10,906
Ավելացում	753	2,113	12,950	350	16,166
Օտարում					
Ընթացիկ ժամանակաշրջանի վերջի տվյալները	2,555	6,519	12,950	5,048	27,072
Մաշվածք	---	---	---	---	---
Սկզբնական մնացորդ	120	1,451		174	1,745
Կուտակված ամորտիզացիա	396	3,761	432	473	5,062
Կուտակված արժեզրկում					
Վերջնական մնացորդ	516	5,212	432	647	6,807
Զուտ հաշվեկշռային արժեք	---	---	---	---	---
Նախորդ տարվա վերջ	1,682	2,955		4,524	9,161
Ընթացիկ տարվա վերջ	2,039	1,307	12,518	4,401	20,265
Շահագործումից դուրս ակտիվներ					
Հաշվեկշռային արժեք	---	---	---	---	---
Նախորդ տարվա վերջին տվյալները					
Ավելացում					
Օտարում					
Ընթացիկ ժամանակաշրջանի վերջին տվյալները					
Մաշվածք	---	---	---	---	---
Սկզբնական մնացորդ					
Կուտակված ամորտիզացիա					
Կուտակված արժեզրկում					
Վերջնական մնացորդ					
Զուտ հաշվեկշռային արժեք	---	---	---	---	---
Նախորդ տարվա վերջ					

Ընթացիկ տարվա վերջ

Ծանոթագրություն 23. "Ստացվելիք տոկոսներ"

	2011թ	2010թ
ա) հաշվեգրված տոկոսներ	31,048	17,604
բ) չճանաչված տոկոսային եկամուտ	-	-
Ընդամենը	31,048	17,604

Ծանոթագրություն 23.1. "Վճարվելիք տոկոսներ"

	2011թ	2010թ
ա) հաշվեգրված տոկոսներ	12,191	3,816
Ընդամենը	12,191	3,816

Ծանոթագրություն 24. "Այլ ակտիվներ"

	2011թ	2010թ
ա) դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	15,915	2,936
բ) դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ (ծան.9)	3	3
գ) արագամաշ առարկաներ	81	41
դ) ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր		
ե) այլ ակտիվներ		
Ընդամենը	15,993	2,974

Ծանոթագրություն 25. "Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր"

	2011թ	2010թ
ա) բանկերից ներգրաված փոխառություններ	-	-
բ) բանկերից ստացված վարկեր և այլ փոխառություններ	-	-
Ընդամենը		

Ծանոթագրություն 26. "Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ"

	2011թ	2010թ
ա) ֆինանսական կազմակերպություններից ներգրաված փոխառություններ	-	-
բ) ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և այլ փոխառություններ	-	-

Ծանոթագրություն 26.1 "Պարտավորություններ կառավարության նկատմամբ"

	2011թ	2010թ
ա) ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	3,024,600	922,000

բ) այլ պետությունների կառավարություններից ստացված վարկեր

-

-

Ընդամենը

3,024,600

922,000

Ծանոթագրություն 27. "Հաճախորդներից ներգրաված փոխառություններ"

	2011թ	2010թ
ա) ներգրավված ցպահանջ փոխառություններ	-	-
բ) ներգրավված ժամկետային փոխառություններ	-	-
գ) ռեպո համաձայնագրեր հաճախորդների հետ	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 28. "Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր"

	2011թ	2010թ
ա) առանց տոկոսի արժեթղթեր	-	-
բ) տոկոսային արժեթղթեր	-	-
գ) թողարկված այլ արժեթղթեր	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 29. "Վճարվելիք գումարներ"

	2011թ	2010թ
ա) վճարման ենթակա շահաբաժիններ	-	-
բ) հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	-	-
գ) այլ վճարվելիք գումարներ	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 30. "Այլ պարտավորություններ"

	2011թ	2010թ
ա) պարտավորություններ տրամադրված չեկերի գծով	-	-
բ) կրեդիտորական պարտքեր		114
գ) վճարվելիք հարկեր	25,432	24,936
դ) ակտիվներին վերաբերող շնորհ	4,755	5,585
ե) այլ պարտավորություններ	496	40
Ընդամենը	30,683	30,675

Ծանոթագրություն 31. "Կանոնադրական կապիտալ"

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 1.150.500 հազ.դրամ, որը բաժանված է 767 բաժնեմասի: Մեկ բաժնեմասի անվանական արժեքն է 1.500.000 դրամ:

Ծանոթագրություն 32. "Վերագնահատման պահուստներ"

	2011թ	2010թ
ա) վաճառքի համար նախատեսված ներդրումների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս	-	-

բ) հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	-	-
գ) այլ պահուստներ	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 33

"Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն"

առ 31.12.11թ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5տարուց ավել	ընդամենը
Ակտիվներ						
Կանխիկ դրամական միջոցներ	-	-	-	-	-	-
Այլ պահանջներ ՀՀ բանկերի նկատմամբ	15,834	709,830	594,000	-	-	1,319,664
Պահանջներ ՀՀ կառավարության նկատմամբ	-	-	15,660	-	-	15,660
Այլ պահանջներ	-	-	-	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	22,514	49,240	129,600	2,769,836	-	2,971,189
Ստացվելիք տոկոսներ	15,517	15,531	-	-	-	31,048
Ընդամենը ակտիվներ	53,865	774,601	739,260	2,769,836	0	4,337,561
Պարտավորություններ						
Բանկերից ստացված վարկեր և այլ փոխառություններ	-	-	-	-	-	-
Հաճախորդներից ներգրաված միջոցներ	-	-	-	-	-	-
Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	-	-	-	-	-	-
Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ	-	-	25,432	1,649,782	1,374,818	3,050,032
Վճարվելիք տոկոսներ	-	-	12,191	-	-	12,191
Այլ պարտավորություններ	376	-	-	-	-	376
Ընդամենը պարտավորություններ	376	0	37,623	1,649,782	1,374,818	3,062,599

"Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն"

առ 31.12.10թ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5տարուց ավել	ընդամենը
Ակտիվներ						
Կանխիկ դրամական միջոցներ	-	-	-	-	-	-
Այլ պահանջներ ՀՀ բանկերի նկատմամբ	33,462	621,851	685,544	-	-	1,340,857
Պահանջներ ՀՀ կառավարության նկատմամբ	-	-	2,629	-	-	2,629
Այլ պահանջներ	-	-	-	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	6,858	23,470	109,026	680,204	-	819,558
Ստացվելիք տոկոսներ	4,727	12,877	-	-	-	17,604
Ընդամենը ակտիվներ	45,454	664,716	805,225	687,075	-	2,202,470
Պարտավորություններ						
Բանկերից ստացված վարկեր և այլ փոխառություններ	-	-	-	-	-	-
Հաճախորդներից ներգրաված միջոցներ	-	-	-	-	-	-
Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	-	-	-	-	-	-
Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ	1,446	-	23,491	-	922,000	946,937
Վճարվելիք տոկոսներ	-	-	3,816	-	-	3,816
Այլ պարտավորություններ	115	-	-	-	-	115
Ընդամենը պարտավորություններ	1,561	-	27,307	-	922,000	950,868

Ծանոթագրություն 34. "Արտարժույթային գամբյուղ"

առ 31.12.11թ.	Դրամ	Ազատ փոխարկելի արտարժույթ	Սահմանափակ փոխարկելի արտարժույթ
Ակտիվներ	4,337,813		
Պարտավորություններ	3,067,474		
Զուտ արտարժույթային դիրք	1,270,330	-	-
առ 31.12.10թ.	Դրամ	Ազատ փոխարկելի արտարժույթ	Սահմանափակ փոխարկելի արտարժույթ
Ակտիվներ	2,180,951		

Պարտավորություններ

956,493

Զուտ արտարժույթային դիրք

1,224,458

-

-

Ծանոթագրություն 35 "Տոկոսադրույքի ռիսկ"

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն կազմակերպության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքերի և նրանց իրական արժեքի վրա:

Կազմակերպությունը 2011թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ չի ունեցել փոփոխվող տոկոսադրույքով տեղաբաշխված կամ ներգրավված միջոցներ: 2011թ-ին տեղաբաշխված միջոցների միջին տոկոսադրույքը մինչև 1 տարի ժամկետով տրամադրված վարկերի համար կազմել է 11%, իսկ 1-ից 5 տարի ժամկետով տեղաբաշխված վարկերի համար կազմել է 11.6%, ներգրավված միջոցների համար՝ 7%: 2010թ-ին տեղաբաշխված վարկերը 1-ից 5 տարի ժամկետով են, որոնց միջին տոկոսադրույքը կազմել է համապատասխանաբար 12.4%, իսկ ներգրավված միջոցներինը՝ 7%:

Ծանոթագրություն 36. "Պայմանական դեպքեր և պոտենցիալ պարտավորություններ"

	Առ 31.12.11թ.	Առ 31.12.10թ.
Զօգտագործված վարկային գծեր	-	-
Տրամադրված երաշխիքներ	-	-
Ընդամենը	-	-
Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով հնարավոր կորուստների պահուստ	-	-

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտը աչքի է ընկնում հաճախակի կատարվող փոփոխություններով և լրացումներով: Վերջիններս երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ: Շատ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Կազմակերպության ղեկավարությունը համոզված է, որ իր գործունեությունը իրականացնում է օրենսդրության պահանջների շրջանակներում և կատարել է իր հարկային պարտավորությունները: Կազմակերպության հանդեպ 31.12.2011թ դրությամբ դատական հայցեր չկան: Հետևաբար Կազմակերպության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստավորումներ չեն կատարվել:

Ծանոթագրություն 37

Ակտիվների և պարտավորությունների կենտրոնացումն ըստ աշխարհագրական տարածաշրջանների

առ 31.12.11թ	ՀՀ	ՏՀԶԿ և այլն
ԱԿՏԻՎՆԵՐ		
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ բանկերում	15,834	-
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	1,303,830	-
Հաճախորդներին տրված վարկեր և	2,971,189	-

փոխատվություններ		
Ներդրումներ արժեթղթերում	-	-
Ընդամենը	4,290,853	-
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին.կազմ.նկատմամբ		
Այլ պետությունների կառավարություններց ստացված վարկեր	-	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	496	-
Ընդամենը	3,025,096	-

"Ակտիվների և պարտավորությունների կենտրոնացում" ըստ աշխարհագրական տարածաշրջանների

առ 31.12.10թ	ՀՀ	ՏՀԶԿ և այլն
ԱԿՏԻՎՆԵՐ		
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ բանկերում	33,462	-
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	1,307,395	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	819,558	-
Ներդրումներ արժեթղթերում	-	-
Ընդամենը	2,160,415	-
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին.կազմ.նկատմամբ	922,000	-
Այլ պետությունների կառավարություններց ստացված վարկեր	-	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	40	-
Ընդամենը	922,040	-

Կազմակերպությունն իր միջոցներն ամբողջությամբ տեղաբաշխել է Հայաստանի Հանրապետությունում: Տեղաբաշխված վարկերի գծով ներդրումների վերլուծությունն ըստ ՀՀ մարզերի ունի հետևյալ տեսքը.

ՀՀ մարզեր	31.12.2011թ.			31.12.2010թ.		
	Գումար	Հնարավոր կորուստների պահուստ	Զուտ արժեք	Գումար	Հնարավոր կորուստների պահուստ	Զուտ արժեք
Երևան	1,414,056	(14,141)	1,399,915	651,263	(6,513)	644,750
Կոտայք	218,665	(2,187)	216,478	4,240	(42)	4,198
Արագածոտն	287,443	(2,874)	284,569	90,000	(900)	89,100
Գեղարքունիք	39,000	(390)	38,610	12,000	(120)	11,880
Լոռի	23,600	(236)	23,364	28,000	(280)	27,720
Տավուշ	44,441	(444)	43,997	33,333	(333)	33,000

Արարատ	55,500	(555)	54,945	9,000	(90)	8,910
Սյունիք	343,218	(3,432)	339,786			
Շիրակ	250,000	(2,500)	247,500			
Վայոց Ձոր	10,600	(106)	10,494			
Արմավիր	314,678	(3,147)	311,531			
Ընդամենը	3,001,201	(30,012)	2,971,189	827,836	(8,278)	819,558

Ակտիվների կազմում վարկերի գծով ներդրումների վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի ունի հետևյալ տեսքը.

Տնտեսության ճյուղը	Գումար	31.12.11թ.		31.12.10թ.		
		Հնարավոր կորուստների պահուստ	Զուտ արժեք	Գումար	Հնարավոր կորուստների պահուստ	Զուտ արժեք
1. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	352,463	(3,525)	348,938	39,000	(390)	38,610
2. Մշակող արդյունաբերություն	2,245,381	(22,454)	2,222,927	644,018	(6,440)	637,578
3. Գյուղատնտեսություն	276,594	(2,766)	273,828	118,000	(1,180)	116,820
4. Առևտուր	4,445	(44)	4,401			
5. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	67,319	(673)	66,646			
6. Կեցություն և հանրային սնունդ	1,999	(20)	1,979	3,333	(33)	3,300
7. Գովազդային գործունեություն	35,000	(350)	34,650			
8. Տնտեսության այլ ճյուղեր	18,000	(180)	17,820	23,485	(235)	23,250
Ընդամենը	3,001,201	(30,012)	2,971,189	827,836	(8,278)	819,558

Կազմակերպությունը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը:

Արտահաշվեկշռային հոդվածների կենտրոնացման վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

	2011		2010	
	Ֆիզիկական անձանցից	Իրավաբանական անձանցից	Ֆիզիկական անձանցից	Իրավաբանական անձանցից
Ստացված գրավներ	1,621,786	5,419,972	710,360	1,466,132
Ստացված երաշխավորություններ	8,614,124	628,800	1,959,000	108,000
Դուրսգրված ակտիվներ	-	-	-	-

Ընդամենը	10,235,910	6,048,772	2,669,360	1,574,132
-----------------	-------------------	------------------	------------------	------------------

Ծանոթագրություն 38. "Գրավադրված ակտիվներ"

Առ 31.12.11թ. Կազմակերպության գրավադրված ակտիվներով ապահովված պարտավորությունները կազմում են՝ 8.513.874 հազ.դրամ:

Ծանոթագրություն 39. "Կապակցված կողմեր"

Կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Կազմակերպության կապակցված կողմերն են՝ հիմնադիրը, ղեկավար անձնակազմի անդամները, նրանց կողմից վերահսկվող այլ անձինք: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության հետ կապված կողմերի հետ գործարքներ չկան: 2011թ-ի ընթացքում Կազմակերպության ղեկավարությանը վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների գումարը կազմել է 29.156 հազ.դրամ:

Գործադիր տնօրեն՝

Ա. Բադալյան

Գլխավոր հաշվապահ՝

Գ. Բրուտյան